

ընելէն ետքը չկարենայ երկրիս վրայ իյնալ, անիկայ յայտնի է որ աս երկու զօրութիւն, այսինքն տրուած ուժով և երկրիս ճգողական ուժովը կը պտըտի երկրիս վրայ առանց իյնալու : Եւ օրինակով կրնաս մտածել նաեւ մեր լուսնին վրայ որ այնչափ հազար տարի է որ երկրիս վրայ կը պտըտի ու չիյնար : Եւ այնպէս է նաեւ երկիրս ու մէկալ մոլորակները , որ արեւուն վրայ կը պտըտին : Եւ մանապէս ուրիշ կըրկնաստղերն ու եռաստղերը որ իրարու վրայ կը պտըտին . և ասոնց նման անբաւ աստղեր որ անհուն տիեզերաց մէջ կը պտըտին , ու դեռ խեղճ մարդուն ջրջրկած աչքերը կարող չեն եղած անոնց հետքը քննելու :

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կամեմապոքեամք մարդուս նախնեացը
Ի՞նչ է՞րաք :

ԻՆԱԳԻՏԱՅ ըսածին նայելով՝ ամէն մարդ իր ծնողացը արինը կը քաշէ . աս արենակցութեան շատ ստուգուած է ուրիշ ապացոյցներով ալ : Ի՛նչ մենք հոս կ'ուզենք աս ցուցնել թէ ի՞նչ զարմանալի համեմատութեամբ մարդուս նախնեացը կամ նախահարցը թիւը կ'աճի : Եւ մենք մարդերէն ծնանի , երկու ծնողք կ'ունենայ , այսինքն հայր ու մայր . երբոր վրան անցնի նոր ծնունդ , չորս ծնողք կ'ունենայ , այսինքն պապ ու մամ հօր կողմանէ , պապ ու մամ մօր կողմանէ . ծնունդ մըն ալ անցնելուն՝ ու թէ . այսինքն պապուն հայրն ու մայրը , մամուն հայրն ու մայրը՝ հօր կողմանէ , և պապուն հայրն ու մայրը , մամուն հայրն ու մայրը՝ մօր կողմանէ . աս համեմատութիւն քսան ծնունդ վրայէ վրայ անցնելով՝ անխախտի կարգով մը ու քիչ միջոցի մէջ մեր նախնեաց թիւը մէկ միլիոնէն աւելի կ'ըլլայ : Հոս թուաբանական ստոյգ

հաշուով աս բանիս ցանկը գնենք .

Օրինակ իբրեւ
Նախնեաց Թիւը

1	.	.	2
2	.	.	4
3	.	.	8
4	.	.	16
5	.	.	32
6	.	.	64
7	.	.	128
8	.	.	256
9	.	.	512
10	.	.	1,024
11	.	.	2,048
12	.	.	4,096
13	.	.	8,192
14	.	.	16,384
15	.	.	32,768
16	.	.	65,536
17	.	.	131,072
18	.	.	262,144
19	.	.	524,288
20	.	.	1,048,576

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի՞նչ :

Ի՞նչ ԶԸ՝ վայրենի ու միանկութիւն սիրող գազան է . անոր համար լեռներուն անտառներուն խոր այրերն ու մութ տեղուանքը կը քաշուի : Ի՞նչ անջները կարճ ու քիչ մը կ'ընեն , աչուրները մանր են ու վրանին կոպի պէս մաշկ մը կայ . դունչը սուր , հոտառութիւնը սաստիկ , կողերն ու սրունքը հաստ ու ջղոտ , թաթերը երկայն , ճանկերը այնպէս ծուռ որ ծառերուն վրայէն շուտ շուտ վեր կ'ելլէ , ձայնն ալ ահաւելի :

Ի՛նչ ԶԹ՝ քաղաքայի երկիրը այնչափ շատ արջ կայ որ դաշտերը խումբ խումբ կը պտըտին . բայց աս տեսակը այնչափ փնասակար չէ : Զմեռը աւելի լեռնե-



Ղերմախ արջ, որ ծովըն հորն մը բռնէր է :

ըը կը բնակին . գարնան կ'իջնան գետերուն քովերը ձուկ բռնելու : Եւ որ շատ ձուկ գտնեն , միայն անոնց գլուխները կ'ուտեն . իսկ թէ որ ձրկնորսի ուռկան մը կամ ցանց մը գրտնեն , վարպետ կերպով մը դուրս կը քաշեն , մէջի ձկները կը ժողվեն : Բամաշատացիք արջ մը տեսածնուն պէս կը սկսին հետը բարեկամութիւն ընել՝ ձկներով ու անոյշ անոյշ խօսելով հետը . և իրաւացին ան տեղուան քը պնջափ ընտանի են արջերն՝ որ ինչուան կանայք ու տղաք կ'երթան անոնց մէջ կը մտնեն՝ առանց փնաս մը կրելու :

Արջը աս կերպով կ'որսան : Ար-

սորդները լախաւով կամ տէգով ինչուան արջուն բոյնը կ'երթան . առաջ փայտերու խուրձեր կուտան արջուն . անիկայ ալ ծակը մտնելէն ետքը ան խուրձերով իր բունին կամ բայոցին բերանը կը փակէ որսորդին դէմ : Եւ ատեն որսորդը կ'ելլէ՝ բայոցին վրայէն կը ծակէ , ու տէգով համարձակ կը զարնէ զանիկայ :

Այրբեմն արջուն անցած ճամբուն վրայ փշոտ գաւազան մը կը դնեն , անոր քովն ալ ծանրոց մը , անանկ որ արջը անցնելու ատենը անոր դուլէն լով վար ձգէ . ան ձայնէն կը զարհուրի արջը ու կը ցատքէ գաւազանին վրայէն . ասով թափին մէկը փուշէ-

բուն մէջը կը մտնէ . մէկալ թաթովը կոխեմ ու խալըսիմ ըսելուն չմտար , անով ալ կը բռնուի , ու իր անխելքութեանը զոհ կ'ըլլայ :

Լ'ըջը շատ անգամ իր վախկոտութիւնը որոգայթ կ'իյնայ : Որսորդները փոս մը կը փորեն , մէջտեղը սրածայր ցից մը կը տնկեն . փոսին բերանը հողի կոշտերով կը ծածկեն , ու արջուն անցնելու ճամբուն վրայ պըղտիկ չուան մը կը ձգեն , անոր ծայրն ալ շինծու մարդ մը կը կապեն պառկած : Լ'ըջը ան չուանին դպչելուն պէս՝ արձանը ոտքի վրայ կ'ելլէ . խեղճ արջը աս տեսնելուն պէս կը սալսափի , արտորնօք փախչիմ ըսելու ատենը փոսին մէջը կ'իյնայ , ցցին կը զարնուի կը խոցուի կը մնայ : Այն որ աս որոգայթէն խալըսի , անդին քիչ մը հեռու երկրթէ սուր սուր ցիցեր կան , անոնց քովն ալ ուրիշ զարհուրելի արձան մը : Երբոր արջը ասոնց մէջ պաշարուած կ'անձրորի , ու չքիտեր թէ ինչպէս խալըսի , որսորդը իր պահուցած տեղէն վրան կը հասնի կը սպաննէ :

Սմանք ծուռութիւն բուսած ծառի մը վերի հաստ ճիւղին վրայ չուան մը կը ձգեն հանկուրցներով , անոր ալ ծայրը կերակուր կը կապեն : Ենթի արջը միսն որ կը տեսնէ՝ ծառին վրայ կ'ելլէ . մէյմըն ալ ան ճիւղին դպչելուն պէս՝ կապերէն մէկուն մէջը կը մտնէ , կապը կը դոցուի , ինքն ալ թօթուրտելով ճիւղէն վար կը կախուի կը խոզուի :

Լ'ըջը մեղրի խենթ է . աս գիտնալով Սուսները կ'երթան մեղուններուն մեղը գրած ծառին հաստ ճիւղերուն մէկէն ծանր կոճ մը կը կախեն որ ինչուան ծառին բունը կ'երկընայ : Երբոր արջը կուգայ որ ծառէն վեր ելլէ , տեսնելով որ կոճը արգելք է՝ մէկդի կը հըէ , ու բունին կը պըլլուի . բայց ան ծանր կոճը կը դառնայ կ'իջնայ անանկ ուժով մը կը զարնուի իրեն որ անիկայ կը սրգոյզի ու աւելի ուժով ետ կը հըէ . կոճն ալ աւելի ծանրութեամբ վրան կ'իջնայ . այն

չափ կ'ըլլայ որ շատ անգամ արջը իր անմտութեամբը հոն կը սպանուի կը մնայ :

Լ'ըջու մորթէն Քամչատացիք կը շէնեն անկողին , վերմակ , դտակ , ձեռնոց և տրեխ : Լ'ըջուն դիրուցը կ'ուտեն , ու վառելու ալ կը բանեցընեն . միսը՝ մանաւանդ պղտիկինը փափուկ կ'ըլլայ կըսեն : Փորոտիքէն Քամչատացի կանայք իրենց ամպհովանի կը շինեն . իսկ ան տեղացի Սուսները իրենց պատուհաններուն կը փակեցընեն , որովհետեւ աղէկ քերածը՝ հասարակ ապակիի պէս թափանցիկ կ'ըլլայ :

Եւստ գիւրին է աս կենդանին ընտանեցընելը , և իրեն բան սորվեցընելը . ուստի արջապանները շատ կը չարչըրկեն աս խեղճ կենդանին՝ աչուրները կուրցընելով , դուռնէն երկրթէ թեւ մը անցընելով , անօթի պահելով ու չարաչար ծեծելով , ինչուան որ սորվի ու իրենց բարբառոսական կամքը կատարէ : Իսկ պարբանելը կը սորվեցընեն՝ երբեմն տաքցուցած երկաթներու վրայ կեցընելով խեղճ արջը , որ ուղէ չուզէ ոտքերուն տեղը կը փոփոխէ , անով պառելու կը վարժի :

Երբ արջը սովորաբար երկու լակոտ կամ թոփուն մէկէն կը բերէ , ու ինչուան վեց ամիս կը հոգայ զիրենք : Ենթե ցնկնած ատենին կըսկոր կ'ըլլան՝ դրեթէ ամենեւին ձև մը չունենալով . միայն դուռնէնին խիստ սուր կ'երևնայ : Սմանք կ'ըսեն թէ մայրը իր ձագերը լսելով ձևի կը բերէ , բայց իրաւ չէ ան խօսքը :

Լ'մերիկայի արջը հասարակ արջէն աս տարբերութիւնս ունի որ մարմնով աւելի պղտիկ է , դուռնը աւելի սուր , ականջները աւելի երկայն , բուրդը աւելի կակուղ՝ փայլուն , դուռնին ու կուրծքին բարակ բրդերն ալ քիչ մը մոլթ կարմրի կը զարնէ :

Լ'մերիկացիք աս արջը դէկտեմբեր ամսուն մէջ կ'որսան , որ ան ատենը խիստ գիրցած կ'ըլլան : Որսի չեւած կը ժողովին որսորդները . ամէնքը մէկ

տեղ ու թը որ ծով կը պահէն ու ազօթքներ կ'ընեն որ իրենց պաշտած հոգիները իմացընեն թէ ուր տեղ շատ արջ կը գտնուի : Այս որովհետեւ բոլոր օրը խելուընին մոռընին արջու վրայ է , հարկաւ գիշերն ալ երազնուն մէջ շատը արջեր կը տեսնեն . աս երազներէն գուշակելով ճամբայ կ'ելեն . մէկգիշին բոլոր գեղացիք ալ ոտք ելած՝ բարեմաղթութիւններով կը ճամբեն զիրենք : Ասանկ յարգի բան է իրենց մէջ աս որսորդութիւն . այնչափ որ քաջ որսորդը աւելի ազնուական կը սեպուի իրենց մէջքան թէ քաջ զօրավար մը . բայց մէկքաջ որսորդ ըսուելու համար՝ պէտք է մէկ օրուան մէջ տասուերկու մեծամեծ գազաններ սպաննած ըլլայ : Որսորդները տուն դառնալէն ետեւ , որչափ քիչ արջ ալ բռնած ըլլան՝ իրենց բարեկամներուն բաժին կը հանեն , իրենք ալ երկայն ատեն անոնց մտովը կ'ապրին :

Արջու տեսակներուն մէջ ամենէն տարբերն ու կատաղին ճերմակ արջը կը սեպուի : Այսոր գլուխը՝ վիզը ու բոլոր մարմինը՝ հասարակ արջուն ձեւէն երկայն կ'ըլլայ , ականջներն ու աչուրները մանր , բայց ականները խիստ խոշոր . մորթը թանձր ու պինտ , գոյնն ալ դեղնախառն ճերմակ . գունչին ծայրն ու ձանկերը սև : Ճերմակ արջերը կը գտնուին աւելի բնեւին մօտ տեղուանք շատը մէկտեղ՝ թէ ցամաքը և թէ ծովի սառերուն վրայ : Արբեմն ասանկ սառի վրայ ելած ատեննին ջուրը զիրենք խիստ հեռու տեղուանք կը տանի . անոնք ալ այնչափ ատեն անօթի մնացած ըլլալով՝ գիմացնին ու որ ելէ՝ կը բզբքտեն կ'ուտեն : Սխայն թէ ասանկ ատեն շուտ մը արջուն առջևը ձեռնոց մը կամ ուրիշ բան մը նետելու է , որ ինչուան անիկայ կրծելու ըլլայ՝ մարդը փախչի ու խալըսի : Ետ անգամ կ'ըլլայ որ մէկ երկու Արոհնախտացիք իրենց նաւակովը ծովին երեսը պտըտելու ատեն՝ երբոր մեծ սառուցի մը մօտե-

նան , յանկարծ սառին վրայէն արջ մը կը ցատքէ նաւակին մէջ . թէ որ նաւակը չգառնայ կամ չըրջի նէ , արջը հանդարտ կը նստի նաւակին մէջը ճամբորդի մը պէս : Սարգիկը կը վախնան , բայց նշան մը չտալով՝ ծովեզերքը կ'երթան կը հանեն զնրք :

Ճերմակ արջը բնութեամբ շատ կատաղի է , ու շատ անգամ նաւավարներ յափշտակեր կերեր է իրենց բնկերներուն աչքին առջևը . բայց ճարտարութիւնն ալ կատաղութէն վարչմար :

Նաւապետին մէկը պատմեր ըսեր է թէ Արոհնախտացիք երբոր ծովը պալենայի ոսկորներ կը ձգէին , մենք նաւէն կը տեսնէինք որ ծովեզերքը աս արջերը ետեւի ոտուրներուն վրայ կեցած , ունեցած ուժոյնին օգը կը հոտուրտային , կ'երևնար թէ առջևի թաթերոյն ալ օդը դէպ'ի իրենց քիթը կը քաշէին . քիչ մը ատենէն կարծես թէ որոշ կ'իմանային ան հոտին իր կողմէն գալը , ջուրը կը նետուէին ու շիտակ դէպ'ի պալենային ոսկորներուն վրայ կ'երթային : Այս արջերը երկար ատեն լողալէն կրնար , անոր համար՝ Նորվեկիացիք պղտի նաւակներով ասոնց ետեւէն կ'իյնան , շուտ մը կը յոգնեցընեն զիրենք ու կը սպաննեն :

Ճերմակ արջերը ձմեռ ատեն ձեռն մէջ կամ սառերու տակ թմրած կը կենան , ինչուան որ օդը քիչ մը տաքնայ , Արսեն թէ աս կենդանւոյս պէս կրակէ ու տաքութենէ փախչող կենդանի չկայ : Ատենով փարիջ ճերմակ արջ մը կայ եղեր որ տաքէն չգիմանալուն համար՝ պահապանները ամէն օր վաթսուն գոյլէն աւելի ջուր կը թափեն եզեր վրան որ զովանայ :